

ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

Այշե Հյուր

1922 թ. հոկտեմբերին Մուսթաֆա Քեմալը մի խումբ ուսուցիչների ասաց. «Երեք ու կես տարի առաջ ապրում էինք որպես կրոնական համայնք... Այդ ժամանակից ի վեր ապրում ենք որպես թուրք ազգ»:

Ըստ իս՝ ժողովրդահանրապետական կուսակցության անդամ Բիրգյուլ Այման Գյուլերը, ով ռասիզմով բուրդոլ «թուրք ազգն ու թուրք ազգը հավասար չեն» արտահայտությամբ «օրակարգի վրա իր կնիքը թողեց», հետ քայլ կատարեց և ասելով, թե «Իմ խոսքերը նույնն են, ինչ Աթաթուրքի ազգի սահմանումը» սկիզբ դրեց մի երկրորդ քննարկման: Շարունակենք մեր ճանապարհորդության այն հատվածից, որտեղ կանգ էինք առել՝ պատասխանելով Այմանի այս վերջին անդամը:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Շեքեթ Սյուրեյյայի՝ «Թուրք չե՞նք» հարցին «Քավ լիցի» պատասխան տված կովկասյան ճակատի օսմանյան զինվորներին «Երջանիկ է նա, ով ասում է՝ թուրք են» գոչել տալը շատ ժամանակ չէլից: Այս ռադիկալ ճանապարհի ճարտարապետ Մուստաֆա Քեմալն ապահովեց սույն փոխակերպման երեք փուլը: Առաջին փուլում Ազգային ազատագրական պատերազմի (նկատի ունի 1919-1922 թթ. թուրք-հունական պատերազմը, որը թուրքերը համարում են ազգային-ազատագրական - Ակունքի խմբ.) տարիներին, Անատոլիայի և Ռումելիի մուսուլման բնակչությանը մեծ տերությունների դեմ միավորելու համար կրոնական արտահայտություններ են օգտագործել: Օրինակ՝ 1920 թ. մայիսի 1-ին Ազգային մեծ ժողովին դիմելիս Մուստաֆա Քեմալն ասել է. «Խնդիրը մեկ անգամ ևս չկրկնելու խնդրանքով ուզում են անդրադարձնել մեկ-երկու կետի. այստեղ ցանկալի և Չեր Բարձրագույն խորհուրդը կազմած անձինք միայն թուրք, չերքեզ, թուրք, լազ չեն, բոլորի բաղադրիչ տարրը իսլամն է, անկեղծ հավաքածու է...»:

Երեք ու կես տարում «ազգ» դառնալ

Երկրորդ փուլում «կրոնական» բնորոշումը կամաց-կամաց իր տեղը գիջում է «քաղաքական» բնորոշմանը: Նախ՝ 1921 թ. փետրվարի 8-ին Ազգային մեծ ժողովի անվանման սկզբում դրվեց «Թուրքիա» բառը: «Թուրք» բառը Մուստաֆա Քեմալն առաջին անգամ որպես «քաղաքական եզր» օգտագործեց 1922 թ. սեպտեմբերի 21-ին Մեծ հաղթանակի կապակցությամբ կատարած հայտարարության մեջ: Մուսթաֆա Քեմալը մի խումբ ուսուցիչների ասաց. «Երեք ու կես տարի առաջ ապրում էինք որպես կրոնական համայնք... Այդ ժամանակից ի վեր ապրում ենք որպես թուրք ազգ»:

Այն, թե թուրք ազգն ինչ տարրերից է բաղկացած, Մուստաֆա Քեմալը ներկայացրեց 1923 թ. մարտի 16-ին Ադանայի Թուրքական օջախի արհեստավորական համայնքի հետ թեյի շուրջ ելույթի ժամանակ. «Մեր ընկերներն իրենց ելույթների ժամանակ ասել են, թե մեր Ադանայում

Երջանիկ է նա, «ով ասում է՝ թուրք են», թե՛ «ով թուրք է»

Թուրքիայում ճանաչված պատմաբան և լրագրող Այշե Հյուրը ծնվ. է 1956թ. Արդվին քաղաքում: Բալկանյան արմատներ ունեցող նրա հայրը ուսուցիչ է աշխատել Թուրքիայի տարբեր քաղաքներում և Այշե Հյուրի մանկությունը ևս անցել է զանազան վայրերում: Ավարտել է Ստամբուլի նշանավոր Բողազիչի համալսարանի պատմության, միջազգային հարաբերությունների և քաղաքականության բաժինը: Այնուհետև ծավալել է գիտական և լրագրողական բուռն գործունեություն: Նրա հոդվածները տպագրվել են Թուրքիայի ամենահայտնի թերթերում և ամսագրերում: «Չայն հանշենականի» 2012թ. N 1-2-ում տպագրել ենք նրա հետ հարցազրույց, իսկ N 11-12-ում՝ նրա «Մի կողմ թող դաշնակցության արխիվը, տես օսմանյանը» ընդարձակ հոդվածը:



առավելություն ունեցող մյուս տարրերը՝ սրանք-նրանք, հայերը, գավթել են մեր արհեստի օջախները՝ դառնալով երկրի տեր ու տիրական: Անկասկած, սա ոչ այլ ինչ է, եթե ոչ գրպարտություն և լկտիություն: Հայերն այս բարեբեր երկրում որևէ իրավունք չունեն: Երկիրը ձերն է՝ թուրքերինը: Այս երկիրը պատմության ընթացքում թուրք է եղել, հիմա թուրք է և թուրք էլ լինելու է...»:

Թեև այս ցեղապաշտական մոտեցումը աշխատեցին հավասարակշռել 1923 թ. ապրիլի 8-ին ժողովրդական կուսակցության հիմնումն ավետող «9 սկզբունքներում» տեղ գտած «Թուրքիայի ժողովրդի» միջոցով, սակայն 1923 թ. հուլիսի 24-ին Լոզանի հաշտության պայմանագրի կնքումից հետո սկսել էին այնպիսի քայլեր անել, որոնք մտածել էին տալիս, թե Ազգային պայքարում իրենց դաշնակիցների կարիքն այլևս չէր մնացել:

1924 թ. Սահմանադրության քաղաքացիության սահմանումը

Օրինակ՝ 1924 թ. Սահմանադրության քննարկումների ժամանակ Համդուլլահ Սուփհին (Թանրեօվեր), հայտնել է, որ հայերը, հույները և հրեաներն այնքան ժամանակ չեն ճանաչվելու «թուրք ազգի

մի մաս», մինչև որ չյուրացնեն Թուրքիայի լեզուն և մշակույթը, իսկ Ջելալ Նուրին (Իլերի) առաջ է քաշել այն գաղափարը, թե «Թուրքիայի իսկական քաղաքացիները թուրքերն են խոսող հանաֆի մուսուլմաններն են»: Արդյունքում Սահմանադրության 88-րդ հոդվածը, որը սահմանում է քաղաքացիությունը, ձևակերպվել է այսպես. «Թուրքիայում յուրաքանչյուրը, առանց լեզվի և կրոնի խտրության, թուրք է»: Համաձայն 12-րդ հոդվածի՝ «Թուրքերն են կարողա՛գրել չինացողները չեն կարող պատգամավոր ընտրվել». սրանով ոչ մուսուլման փոքրամասնությունների և քրդերի ճանապարհը կտրում էին:

Հավանաբար այս արհամարհանքի հակազդեցությունը եղած շեյխ Սաիդի ապստամբությունը ճնշելուց հետո վարչապետ Իսմեթ փաշան «Վաքիթ» թերթի 1925 թ. ապրիլի 27-ի համարում լույս տեսած հայտարարության մեջ ասում է, որ ռեժիմը ռասիզմ մեջ հաստատակամ է լինելու. «Ազգությունը մեր միակ միավորիչ ուժն է: Մյուս տարրերը թուրք մեծամասնության վրա ազդելու ուժ չունեն: Մեր պարտքն է թուրքական հայրենիքում գտնվողներին անմիջապես թուրք դարձնել: Այն տարրերը, որոնք թուրքերին և թրքականությանը կընդդիմանան, կզգմենք: Այն հատկանիշները, որոնք պետք է փնտրել հայրենիքին ծառայողների մեջ, նախ և առաջ թուրք և թուրք ազգայնամուլ լինելն է»:

Ռասայի բարեփոխումը քաղաքակրթության հարց է

Հայտն է, որ որոշ ժամանակ Մուստաֆա Քեմալը համակ ուշադրությամբ ուսումնասիրել է այնպիսի ռասիստ մտածողների ստեղծագործությունները, ինչպիսիք են Գոթինոն և Փիթարոն: Քեմալի ցուցումներով 1925 թ. ստեղծված Թուրքական անտրոպոլոգիական հետազոտությունների կենտրոնի կատարած առաջին աշխատանքների շարքում են «Քարաջահիմեդ գերեզմանատնից հավաքած գանգառուփերի չափումը» և «տարբեր ռասաների պատկանող թուրք, հայ, հույն և հրեա երեխաների վրա» կատարված համեմատական հետազոտությունները:

1926 թ. սեպտեմբերի 30-ին Չանքայի նախագահական պալատում Մուս-

թաֆա Քեմալը Թուրքիայի մարզական միության կոնգրեսը ներկայացնող պատվիրակությանն ասաց. «Այսքան կարևոր սպորտային կյանքը մեզ համար ավելի կարևոր է, որովհետև ռասայի հարց է: Ռասայի բարեփոխման և հոգեկան հանգստության հարց է: Ըմբռնության և նույնիսկ մի քիչ էլ քաղաքակրթության հարց է»: Այնուհետև 1927 թ. հոկտեմբերի 20-ին երիտասարդության ուղղված ելույթի ժամանակ ասելով՝ «Թուրք երիտասարդ, ուժը, որի կարիքն ունես, երակներովդ հոսող արյան մեջ է», ռասիզմին տվեց մետաֆորիկ ձև: Հաջորդ տարի համալսարանական երիտասարդների սկսած «Քաղաքացի», թուրքերեն խոսիր» և «Թուրքական ազգային պետության համար թուրք քաղաքացի դաստիարակեք» արշավների արդյունքում գործը թափ ստացավ:

Սահմուդ Էսադ Բոզքուրթի մարզարիտները

1927 թ. փուլ առ փուլ շարունակվող Արարատի քրդական ապստամբությունն արյան մեջ ճնշած այդ ժամանակակա Արդարադատության նախարար Սահմուդ Էսադ (Բոզքուրթ) բեյի՝ «Աքշամ» թերթի 1930 թ. սեպտեմբերի 1-ի համարում լույս տեսած հետևյալ արտահայտությունները օսմանյան «թուրքերի» համար կատարած սահմանումների գրեթե կրկնօրինակն էին. «(Քրդերն) իրենց կյանքում չեն հասկացել դառնությունների իմաստը: Արյունարբու, անվախ, վայրի են: Շատ ստոր են: Բռնելու դեպքում մեկ փամփուշտով Չեզ չեն սպանի: Աչքները կհանեն, քիթները կկտրեն, եղունգները կհանեն և այդպես կսպանեն: ... Ասում են՝ նրանց կանայք էլ են իրենց նման...»:

Սահմուդ Էսադ բեյի ամենահայտնի խոսքը 1930 թ. սեպտեմբերի 18-ին Օդեմիշ հանդակում արտասանած ճառն է. «Ես կարծում և համոզված եմ, որ այս երկիրն ինքնին թուրք է: Նրանք, ովքեր մաքուր թուրք չեն, այս թուրքական հայրենիքում մի իրավունք ունեն, այն է՝ լինել ծառա, ստրուկ»:

Ալպիական ռասայի առանձնահատկությունները

1932 թ. հուլիսի 2-11 տեղի ունեցած Առաջին պատմագիտական կոնգրեսի ժամանակ, որտեղ քննվում էր թուրքական պատմագիտական թեզը, համաձայն որի՝ աշխարհի բոլոր քաղաքակրթությունները թուրքերն են ստեղծել, Ռեշիդ Գալիփը «արտոնյալ թուրքական ռասան» հետևյալ կերպ բնորոշեց. «Քարծրահասակ, սպիտակամորթ, ուղիղ կամ էլ մի փոքր կեռ նուրբ քթով, հավասար շրթունքներով, մեծավ մասամբ կապուտաշյա, ոչ թե շեղաչք, այլ հորիզոնական բացվող ականկապիճներով «ալպիական ռասա» (...)

Երջանիկ է նա, «ով ասում է՝ թու՞րք են», թե՞ «ով թուրք է»

Հայտնի են այնպիսի սոցիալական առանձնահատկություններով, ինչպիսիք են Ա խմբի արյան օրգանական առանձնահատկությունները՝ քաղաքակրթություն, հերոսություն, արվեստի ունակություն: Անտրոպոլոգ պրոֆեսոր Շևքեթ Ազիզ (Քանսու) բեյը, ով կոնգրեսին, որպես թուրքական ռասայի օրինակ, ներկայացրել էր գյուղացի շիկահեր ամուսինների՝ իրենց երեխաների հետ, շրջվելով Դագիի (Մուստաֆա Քեմալ-Ալունքի խմբ.) կողմը, ողջունեց որպես այդ գարգացած ռասայի առաջնորդ արժանանալով բարձր ծափահարությունների:

1933 թ. Նոր տարվան Կրթության նախարար Ռեշիդ Գալիփի՝ Մուստաֆա Քեմալին նվիրած գրքերից մեկը «պատահական բացում» և կարդում է հետևյալ ենթավերնագիրը. «Այսօրվա թուրք երեխաները, ովքեր որոշել են իրենց միտքն ու հոգին լուսավորել ամենավերջին առաջադեմ կրակով, գիտեն կամ պետք է իմանան, որ իրենք 4 հարյուր վրան ունեցող աշխրեթից չեն սերում, այլ տասնյակ հազարավոր տարիների պատմություն ունեցող, արիական, քաղաքակիրթ, բարձր ռասայից սերող ունակություններով օժտված ազգ են» (անընդհատ ծափահարություններ): Ինչպես հայտնում է Աֆեթ Ինանը, այս խոսքերն անձամբ Մուստաֆա Քեմալն էր գրել տվել:

1933 թ. 5 տարի ընդմիջումից հետո համալսարանական երիտասարդները «Քաղաքացի, թուրքերեն խոսիր» արշավով հասարակության ոչ թուրք հատվածին նորից սկսեցին ահաբեկել:

Բնակեցման օրենքի ռասիստական լեզուն

1934 թ. հունիսին ընդունված բնակեցման մասին օրենքով, որով նպատակ ունեին կարգավորել «քրդական հարցը» և լուծել թուրքա գաղթած մուսուլման գաղթականների բնակեցման հարցը, օգտագործելով այնպիսի եզրեր, ինչպիսիք են «ցեղ», «ռասա», «մշակույթ», «լեզու», Թուրքիան բաժանվեց երեք շրջանի: Օրենքի ձևակերպման մեջ թիվ 1 շրջանը կազմում էին այն վայրերը, որոնք պետք է ունենային հոծ թուրք բնակչություն: Թիվ 2 շրջանի մեջ մտնում էին այն վայրերը, որոնք առանձնացված էին թուրքական մշակույթին ծուլելու համար նախատեսված բնակչության տեղահանման և բնակության համար: Թիվ 3 շրջանի մեջ այն վայրերն էին, որոնք առողջական, տնտեսական, մշակութային, քաղաքական, ռազմական և կարգ ու կանոն հաստատելու պատճառներով պետք է դատարկվեին. բնակեցման համար արգելված էին:

Այսպիսով՝ 1924 թ. Սահմանադրության 88-րդ հոդվածում տեղ գտած «կոչվում է թուրք» արտահայտության ենթատեքստը մեկ անգամ ևս հասկանալի է դառնում:

1936 թ. Աֆեթ Ինան, ով ձևակերպել է Արևային լեզվի տեսությունը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ինչպես որ բրախիկեֆալ թուրքական ռասայի ստեղծած մշակույթն է ժամանակակից աշխարհի քաղաքակրթության համար աղբյուր հանդիսացել, այնպես էլ Եւրոպայից Աֆրիկա, նույնիսկ մինչև Ամերիկա ընկած բոլոր լեզուների մայր լեզուն թուրքերենն է», որպեսզի «ցույց տա, որ թուրքերը բրախիկեֆալ այլիական ռասայի փառահեղ ներկայացուցիչ են», շվեյցարացի անտրոպոլոգ Փիթարի ղեկավարությամբ դոկտորական աշխատանքի ժամանակ Աթաթուրքի հրահանգով 64 հազար հոգու վրա անտրոպոլոգիական չափումներ է կատարել: Նման «ռասիստական» աշխատանքը, որն անգամ նացիստական Գերմանիայում չի կատարվել, իրականացվել է վարչապետի, Ազգային անվտանգության, Առողջապահության և Կրթության նախարարությունների տարատեսակ աջակցությունների արդյունքում: Չափումները կատարել են քաղաքացիական և զինվորական բժիշկները, առողջապահու-

թյան պաշտոնյաները, մարմնամարզության ուսուցիչները: Աֆեթ Ինանին փորձաքննման համար կամավոր զինվորներ են տվել:

Անտրոպոլոգիայի կիրառությունը

1937 թ. սեպտեմբերի 20-25-ին տեղի ունեցած Պատմագիտական երկրորդ կոնգրեսին Սադրի Մաքսուդի Արսալը ներկայացնում է «Մարդկության պատմության ընթացքում պատմության և իրավունքի պատճառները և թուրքական ռասայի դերը կազմակերպությունների գարգացման ընթացքում» զեկույցը, Հասան Ռեշիդ Թանքուլը՝ «Լեզվի և ռասայի հարաբերությունները» զեկույցը, դոկտոր Նուրեդդին Օնուրը՝ «Արյան խմբերի տեսանկյունից թուրքական ռասայի ծագման վերաբերյալ ուսումնասիրություն»: Կոնգրեսին, որը կոչված էր ևս մեկ անգամ հայտարարելու, որ Թուրքական պատմագիտական թեզը ճիշտ է, զեկույցով հանդես է եկել նաև Փիթարը: Իսկ Կրթության նախարարի «պաշտոնական ղեկավարությամբ» 1925-1939 թթ. լույս տեսած Թուրքական անտրոպոլոգիական ամսագիրը, այդ ժամանակ անտրոպոլոգիան որպես գիտական գործիք օգտագործելով, բազմաթիվ օրինակներով ասպացուցում է թուրք ազ-

գի առավելությունը: Ես երկու օրինակ բերենք՝ ցույց տալու, որ ռասիզմը տեսությանը չի սահմանափակվել, և վերջացնենք. «Ջուռուխից» թեթի 1937 թ. հուլիսի 24-ի համարում լույս տեսած մի հայտարարության մեջ Անկարայի ռազմական անասնաբուժության դպրոց ընդունվելու համար դիմորդներից պահանջվող չափանիշները մեկն էլ «թուրք ազգի լինելն էր»: «Ջուռուխից» թեթի 1938 թ. սեպտեմբերի 6-ի համարում «Թուրքաբուն» տնօրինությունը ինքնաթիռի ուսուցիչների վերաբերյալ մեկ այլ հայտարարության մեջ դնում է հետևյալ պայմանը՝ «Անհրաժեշտ է լինի թուրք ազգից»:

Բավականին հետաքրքիր է թուրքական ռասիզմի 1938 թ. ավարտը, սակայն մի՞թե գրածիցս հասկանալի չէ, որ Բիրգուլ Այման Գյուլերի՝ ռասիզմով բուրոլ գաղափարները Աթաթուրքի օրոք սկսված և մինչ մեր օրերը անդադար ձգված «չինարարական» գործընթացի արդյունք հանդիսացող և, եթե հակիրճ փորձենք ներկայացնել, «թուրքական ինքնությունը մյուս ինքնություններից բարձր է» ընկալման վնասված լինելու ցավալի արտացոլումն է:

Թարգմանեց
ԱՆԱՀՆՏ ՔԱՐՏԱՇԱՆԸ
Akunq.net

Աննա Մուրադյան լրագրող

Դիարբեքիրը կամ ինչպես տեղացի հայերն են ասում՝ Տիգրանակերտը, Թուրքիայի հայաթափված այն քաղաքներից է, որի մշակութային դիմագծում հայկական ժառանգությունն ու հայկական շուրջն անբաժան տարրեր են: Քուրդ քաղաքապետ Օսման Բայրեմիրը, ով հայտնի է հայասիրական կեցվածքով՝ հայերին դիմավորում է «Բարի գալուստ ձեր քաղաք» ողջույնի խոսքերով:

«Միջազգետը միշտ բազմամշակութային է եղել ու հնարավոր չէ այն պատկերացնել միասեռ,- ասաց նա,- դժբախտաբար մենք կորցրեցինք այս պատմությունը, սակայն վերջին 10-15 տարիներին ընթացքում մենք աշխատում ենք վերակենդանացնել քաղաքի բազմամշակութային շերտերը»:

Բայրեմիրն ասաց, որ նախկինում աքսորված թուրք Ջեմիլ փաշայի տունը պատրաստվում են վերածել թանգարանի, որտեղ առանձին մասով ներկայացված կլինի նաև Հայոց Ցեղասպանությունը:

«Մենք ուզում ենք անցյալի հիշողությունները վառ պահել ու ինչ-որ ձևով փոխհատուցել անցյալի սխալները,- ասաց նա,- ու առանց հայ համայնքի հետ համագործակցության չենք կարող այդ նախագիծն իրականացնել»:

Իրականում, Դիարբեքիրում հայերին ու Հայաստանը հիշեցնող շատ քիչ փաստական և շոշափելի տվյալ է մնացել. Սուրբ Կիրակոս եկեղեցին, թուրքական կոտորածներին զոհ գնացած մարդկանց հիշատակին կանգնեցված հուշակոթողը, որի վրա քրդերեն, անգլերեն, թուրքերեն, հայերեն և ասորերեն լեզուներով գղջումի տողեր կան և մարդկային հիշողություններ, որոնք, ի դեպ, բավական շոշափելի էին:

Քաղաք ոտք դնելուն պես՝ տանը լինելու և հարազատության մի անհասկանալի զգացում են ունենում, որը չի լքում անգամ շուրջ բոլորը սիրված մզկիթների ու քրդական մշակույթի առկայության դեպքում:

Ուղի վարպետ, տիգրանակերտցի Երվանդ Բուստանջին, որ հայտնի է Ուղի

Տիգրանակերտի հայերն ու քաղաքային իշխանությունների կեցվածքը



Երվանդ անունով, անընդհատ կրկնում էր, որ այն ինչ Տիգրանակերտը դարձնում է Տիգրանակերտ. դա հայերն են: «Քանի որ ամեն ինչ այս քաղաքում ապրում է հայկական շնչով», - ասում է նա: Տիգրանակերտի պատմությունն ու քաղաքի անունը խորհրդանշանական են հայերի համար, քանի որ այն կապվում է Տիգրան Մեծ թագավորի հիմնադրած Տիգրանակերտի հետ, որը սակայն գտնվում է ներկա Դիարբեքիրից 60կմ դեպի հյուսիս-արևելք:

Իրականում Դիարբեքիրը, որը համարվում է քրդերի ոչ ֆորմալ մայրաքաղաքը, պատմական Հայաստանի Մեծ Հայքի Աղձնիք նահանգում Արևմտյան Տիգրիսի աջ ափին կառուցված քաղաք է, ու քանի որ ըստ պատմական աղբյուրների՝ քաղաքի հիմնադրումը կապվում է Հայոց Տիգրան Երվանդունի թագավորի հետ, այն նույնպես կոչվել է Տիգրանակերտ, և սա շփոթմունք է առաջացնում՝ նույնացնելով այս երկու քաղաքները միմյանց հետ:

20-րդ դարասկզբին Դիարբեքիրն ունեցել է մոտ 50 հազար բնակիչ, որից շուրջ 10-15 հազարը հայեր են եղել: Նրանք տարբեր ժամանակներում կոտորվել ու տեղահանվել են, սակայն դեռևս մինչև 20-րդ դարի 80-ականները քաղաքում հայկական ներկայությունը նշանակալից է եղել:

50-ամյա Երվանդ Բուստանջին պատմում է, որ 37 տարի առաջ, երբ նա սուրբ Կիրակոս եկեղեցում երգում էր եկեղեցին լի էր հայերով:

Սուրբ Կիրակոս յոթ խորանով հոյակերտ եկեղեցին, որը տարածաշրջանում ամենամեծն է, գործել է մինչև 1980թ., որից հետո դադարել է՝ քանի որ քաղաքում այլևս հայ չէր մնացել: Եկեղեցու գանձակատունը, որը 27 մ բարձ-

րություն ուներ, հիմնահատակ քարուքանդ էին արել, քանի որ մահմեդական կեցվածքը չէր հանդուրժում միևնաբեթից բարձր գանձակատան գոյությունը:

Հենց այդ ժամանակ էլ՝ 21 տարի առաջ, Ուղի Երվանդը և լքել է Դիարբեքիրն ու գնացել Լուս-Անջելես:

«Մի գիշեր նվագում էի մի տեղ ու հայերեն էի երգում, երբ մի մարդ եկավ ու հարցրեց, թե ինչ լեզվով եմ երգում. ասացի՝ հայերեն,- պատմում է նա,- ասացի, որ հայ եմ, այդ մարդը մտադրեց քունքիս ու ասեց, որ պիտի ինձ սպանի, ես էլ ասացի, որ հաջորդ օրն էլ պիտի գամ այստեղ ու հաջորդ օրն էլ հայերեն պիտի երգեմ»:

Երկու տարի առաջ Երվանդը հետ է



Երվանդ

վերադարձել թուրքական իշխանությունների խնդրանքով ու այժմ նվագում է քաղաքի պետական նվագախմբում: «Հիմա ինձ շատ լավ են վերաբերվում,- նշում է նա,- ոչ ոք ինձ չի նեղացնում»: Լրագրողի դիտարկմանը ի պատասխան, թե այլևս հայ չի մնացել, դա համար էլ չեն նեղացնում. Երվանդը տխուր լռում է:

Ս.Կիրակոսը՝ աշխարհով մեկ սևեղծ տիգրանակերտցիների հանգանակություններով և քաղաքապետարանի 70/30 համամասնական աջակցությամբ վերականգնվել է: Չանգակատունը այժմ նույն բարձրության է, իսկ եկեղեցու

գմբեթին խաչը դրվել է: 2011թ. այնտեղ պատարագ է մատուցվել, որից հետո մի քանի մկրտություն է եղել:

Այժմ եկեղեցին, սակայն, դատարկ է, թեպետ, ժամանակ առ ժամանակ մարդիկ են այցելում: Ուղի Երվանդը արցունքները հազվել էր զսպում այդ մասին խոսելիս: Նա Դիարբեքիրի այն քաղաքական հայերից է, որ թե հայերեն է խոսում, և թե երբեք չի թաքցրել հայ լինելը:


Թեպետ այժմյան Դիարբեքիրի հայկական ներկայության մասին շատ տարբեր թվեր են շրջանառվում, սակայն մասնագիտությամբ ինժեներ, 33-ամյա Ֆրատը (հայերեն անունը՝ Եփրատ), ասում է, որ քաղաքի 1 մլն. բնակչությունից մոտ 250 հազարը հայեր են:

«Երբ ես 8-9 տարեկան էի, այստեղ բազմաթիվ հայեր կային, բայց հետո նրանք բոլորը գնացին Ստամբուլ,- պատմում է նա,- հիմա ընդամենը 20 ընտանիք կա, որ ասում են՝ մենք հայ ենք, սակայն այստեղ բոլորը գաղտնի հայեր են: Ես երեխա ժամանակվանից ասել եմ, որ հայ եմ ու իմ ընտանիքն այստեղ ապրել է մոտ 600 տարի»:

Քաղաքապետ Բայրեմիրը ևս շեշտեց, որ էթնիկ պատկանելությունը նշող մարդկանց բազա չունեն, սակայն ժպտալով ասաց, որ լուրջ հայկական բնակչություն կա ու շատ երկար ժամանակ հենց իրենք՝ քրդերը, մեղադրվել են հայկական դիրքորոշում ունենալու մեջ՝ պատճառաբանությամբ, որ նրանք բոլորը հայերի սերմեր են:

«Բոլորովին վերջերս մենք 7-8 ընկերներով մտած էինք ու խոսում էինք այս հարցի մասին և ներկա բոլոր իմ ընկերներն էլ ասացին, որ նրանց տատը կամ պապը հայ է, օրինակ իմ կնոջ պապը նույնպես հայ է», - ասաց նա:

Եփրատը (Ֆրատը) պնդում է, որ մարդիկ մինչև այսօր վախենում են խոսել այդ մասին, ընդ որում այդ վախերը գալիս են ոչ միայն պետությունից, այլև բնակչությունից:



Դելալ Էրսան անունով մի կին, որը տեղական տուրիզմը զարգացնելու նպատակով հաճախ է լինում ս.Կիրակոս եկեղեցում, պատմում էր, որ եկեղեցին, այդուհանդերձ, այցելուներ ունենում է: Նա ուղղակիորեն չպնդեց, բայց կարծիք հայտնեց, որ այդ մարդկանցից մի մասը, հավանաբար, հայկական ինքնություն ունեցող մարդիկ են, որոնք թաքցնում են այն:

Բայդեմիրն ասում է, որ անցյալի հսկայական ազդեցությունը կա և դեռևս այնքան էլ ընդունված չէ բարձրաձայն շեշտել իրենց էթնիկ պատկանելությունը: «Մարդիկ իրենց այդքան վստահ չեն զգում, որ բարձրաձայն արտահայտվեն ու քաղաքապետարանի մոտեցումը դեռևս բավարար չէ, ու Դինքին սպանողները դեռևս թաքցնում են,- ասում է նա,- բայց ես կարծում եմ, որ կզա ժամանակը, երբ բոլորը բարձրաձայն կհայտարարեն իրենց ով լինելու մասին, եթե իհարկե ցանկանան»:

Թուրքիայում, սակայն, էթնիկ պատկանելության հարցը զտնվում է խիստ տարակուսելի իրավիճակում, քանի որ անկախ անձի էթնիկ ինքնագիտակցությունից՝ Թուրքիայի քաղաքացու անձնագրում գրված է թուրք:

Բայդեմիրն ասում է, որ այդ հարցում իրենք ավելի լավ վիճակում չեն, քան հայերը: «Մինչև այժմ մենք ստում ենք դպրոցներում, և մեր երեխաները դպրոցում ասում են, որ թուրք են,- ասաց նա,- դուք պատկերացնո՞ւմ եք, թե երեխան, որ ամեն օր դպրոցում ստում է, ինչպես է լինելու այդ հարցը»:

Եփրատը մահմեդական է, բայց չի աղոթում: Նրա երկու մորաքույրներից մեկը քրիստոնյա է, մյուսը՝ մահմեդական: «Մենք մնացել ենք մեշտեղում», - դառը ժպտում է նա:

Նա դեռևս ամուսին է ու ասում է, որ թուրքի հետ չի ամուսնանա ոչ մի դեպքում: «Հայի կամ քուրդի հետ կամուսնանալ, բայց այնպիսի մի մեկի հետ, որ մոլեռանդ կրոնամոլ չլինի», - ասում է նա:



Ուրի Երվանդ

Նրա ցանկությունն այն է, որ բոլորը՝ ավելի, թուրք, հայ թե քուրդ՝ իրար հավասար լինեն, այդ թվում՝ գեյ, լեսբի, տրանսսեքսուալ, թե՛ հետերոսեքսուալ:

Երվանդը ևս ամուսնացած չէ, սակայն պատրաստվում է ամուսնանալ տեղի մի աղջկա հետ, ում հայրը հայ է, մայրը՝ թուրք: Նախկինում ամուսնացած եղել է, սակայն երեխաներ չունի: Հարցին, թե նախկին կինը թո՞ւրք է եղել, ներկայումս պատասխանում է. «Ես թուրքին հե՛տ պիտի ամուսնանայի»:

Ընդհանրապես, Թուրքիայի բոլոր հայերն էլ ծգտել են հայի, կամ հայկական ինքնություն ունեցող աղջիկների կնության առնել: «Լռության ձայները. Դիարբեքի իրերը խոսում են» գրքում տեղ գտած 16 մարդկային պատմությունների առանցքում հայ աղջիկ գտնելու և հայ արմատներով կամ հայ ինքնությամբ աղջիկ կնության առնելու միտքը մշտապես շեշտվում է:

Քաղաքապետ Բայդեմիրն ասում է, որ տեղական իշխանությունների ջանքերը ուղղված են նրան, որ այս սերունդը ավելի ազատ զգա այս քաղաքում իրենց էթնիկ պատկանելության հարցում: Հայկական հարցի լուծումը նա տեսնում է միասին ապրելու տեսլականում:

«Մենք բոլորս ինքավոր ժողովուրդ ենք ու միասին ենք ապրել,- ասում է նա,- մեր խնդիրն է հնարավորություն ստեղծել մեր հայ եղբայրների համար, որոնք ապրել են այստեղ, որպեսզի նրանք մտնեն իրենց տեղի»:

Մար պահանջում է 483 տարվա ազատագրվում:

Օսման Բայդեմիրը ևս շեշտում է փոխհատուցման մասին, նշելով ս.Կիրակոսի վերականգնումը որպես դրան ուղղված առաջին քայլ:

«Այժմ մենք պատրաստ ենք անելու երկրորդ քայլը, հայերին պատկանող հողերի հարցում,- մեկնաբանում է նա,- այն հողերը, որոնք ժամանակին պատկանել են հայ համայնքին, այժմ տեղական քուրդ ժողովրդի կողմից կառուցապատված է և հնարավոր չէ հետ վերցնել, սակայն մենք առաջարկում ենք դրա փոխարեն վերցնել մեկ այլ տարածք, որը քաղաքապետարանի ենթակայության տակ է»:

Հայերին պատկանող հողերը համարվել է համայնքին, որի առաջնորդը եկեղեցին է, այսինքն հողերի իրավահաջորդ պահանջատերը Պոլսո պատրիարքարանն է: 2011թ. օգոստոսին Թուրքիան օրենք է ընդունել 1936թ.-ից գործող օրենքով՝ կրոնական փոքրամասնություններից բռնագրավված գույքը հետ վերադարձնելու մասին: Այս օրենքի ընդունումից անցել է արդեն 2 տարի, սակայն իրերի դրությունում ոչ մի էական տեղաշարժ չի եղել:

Բայդեմիրը, սակայն պնդում է, որ իրենք կարող են գնահատել, թե որքան է եղել այդ հողի արժեքը իրենց տարածքում և դրա դիմաց հատկացնել դրան համարժեք հող այն մարդկանց, ովքեր այնտեղ ապրել են:

«Մի պայմանով, որ այդ մարդիկ զանազան ապստեղ, տներ կառուցեն ու շենացնեն Դիարբեքի,- ասում է նա,- ես չգիտեմ, թե ի վիճակի կլինեն տեսնել այս ամենը, թե՛ ոչ, բայց կարծում եմ, որ Հրանտ Դինքը այժմ տեսնում է այն, ինչ կատարվում է»:

Այս հարցերին պատասխանը չունի նաև Ուրի Երվանդը, ով թեպետ եղել է Հայաստանում, սակայն ասում է, որ իր համար Հայաստանը Տիգրանակերտն է: religions.am

2013թ. նոյեմբերի 2-4-ը Թուրքիայում ակնառու դարձանք մի դարակազմիկ իրադարձության, ճիշտ այնպես, ինչպես 2005թ. դարձյալ Ստամբուլում կազմակերպված կոնֆերանսի դեպքում: Ինչպես բազմիցս շեշտել է Թաներ Աբչամը, Հայոց ցեղասպանության կառուցվածքային տարրը հանդիսացող բռնի կրոնափոխության, այսինքն՝ իսլամացման թեմայի շուրջ կազմակերպվեց մի կոնֆերանս, որը կոչված էր ոչնչացնելու պաշտամունքային կուռքերը: Խորհրդատու Մուսթաֆա Ուլչաների հետ մեկտեղ մի զեկուցում ներկայացրեցինք՝ այն մասին, թե ինչպես են Աղքամանի Բեսնի գավառում մահմեդականացվել մանկական տարիքում որբացած հայերը:

Ուրի Բուրք

Բեսնիում կրոնափոխները «մի հսկայական ընտանիք են»



Լ Բեսնիի վերաբերյալ ընդունված տեղահանության մասին որոշմամբ, աքսորվել են՝ իբրև թե Ուրֆա տեղափոխվելու անվան տակ: Նրանք հավաքաբար սպանվել են՝ դեպի Եփրատ հոսող Գյոքսու գետում խեղդամահ արվելով:

1915 թ. Բեսնիում իրենց ընտանիքները կորցրած և որբ մնացած ու հետագայում զանազան ընտանիքների կողմից որդեգրված և իսլամացված երեխաների թիվը շուրջ 35-40 է: Սակայն նրանցից ոչ բոլորն էին Բեսնիից ծագում: Այստեղ՝ իրենց ընտանիքներից զրկված երեխաների հետ մեկտեղ կային նաև Չեթանից, Մարաշից, Մալաթիայից, Սվասից (Սեբաստիա-Ակունքի խմբ.), Բայբուրթից (Բաբերդ-Ակունքի խմբ.) և շրջակա այլ նահանգներից ու գավառներից տարբեր ճանապարհներով Բեսնի բերված մանուկներ:

Խիստ ուշագրավ է այն փաստը, որ վերոնշյալ գրեթե բոլոր որբերը, մեր հան-

դիպածներն էլ՝ ներառյալ, ազգական են միմյանց: Քանզի այս որբերի մեծ մասին իրար հետ են ամուսնացրել: Հետևաբար, այս ազգակցության պատճառը պայմանավորված է մեր հանդիպած անձանց պատերի և տատերի ազգական լինելու հանգամանքով:

Մեր այս ուսումնասիրության նպատակը 1915 թ. հուլիսի 28-ին կայացված որոշումից առաջ Աղքամանում և հետագայում՝ վերջինիս ենթակա գավառ դարձած Բեսնիում տեղի ունեցած տեղահանության ու ցեղասպանության ընթացքում որբացածների և մոտակա շրջաններից դարձյալ Բեսնի եկած որբ մանուկների պատմությունները հենց այդ երեխաների թռեմների միջոցով ներկայացնելն էր: Հիշյալ բոլոր որբ երեխաները մահմեդականացվել են և ապրել որպես մուսուլման: Նրանցից հետո եկած երկու սերունդները ևս շարունակում են այդ կերպ ապրել: Չնայած դրան՝ այն թուրք տուննի հանրությունը, որի մեջ ապրում են նրանք, այդ անձանց տվել է «գյավուր» և «դյունմե» պիտակները, և այդ պիտակավորումը, կառուցվածքային և անգամ օրինական տեսք ընդունելով, ողջ ուժով պահպանվում է մինչ այժմ:

Երրորդ սերնդի ապրած այդ դրաման և այն իրադրությունը, որին հանդիպել է, կարելի է լավագույնս ամփոփել այն երկու անձանց հետևյալ նախադասություններում, որոնք մենք հանդիպել ենք.

«Այ մարդ, գոնե թողնեն՝ մոռանանք, մեր կյանքը շարունակենք... Այ ընկեր, մենք ի՞նչ ենք, ո՞վ ենք: Դո՞ւ ես մորդ ու հորդ ընտրել: Դո՞ւ ես ծննդավայրդ ընտրել: Դու միայն ընկերոջդ ես ընտրում: Ինչի՞ հետևից ենք ընկել ուրեմն: Մենք Նոյից ենք ծագում, նրա հետնորդներն ենք: Մինչև այնտեղ հասիր, ապա՝ մարդուն սիրի, հետո կխոսենք»:

«Այսինքն, եթե ներկա պահին մեր կողքին մի բեսնեցի լինի, ու որևէ թեմա քննարկենք, դեռ դյունմե լինելու փաստը դեմքիս կշարտի: Կարծես թե ես անպատվություն եմ գործել...»:

Թռեմների կարծիքով՝ 1915 թ. պատճառը տնտեսական գործոնն է եղել

«Ամենակարևոր գործոնը տնտեսականն է...: Դրամի համար արեցին, քանի որ բոլոր հայերը հարուստ էին, ոչ մի աղքատ չկար նրանց մեջ: Հո չէին կարող գնալ ու կոկորդ սեղմելով խելի: Արդեն իսկ նրանց վաստակածի մեկ երրորդը որպես հարկ էին վերցնում: Եթե նրանց վրա հարձակվեին, ընթացություն էր լինելու: Ես չեմ կարծում, թե փոքրամասնությունները շատ ապստամբ էին: Փոքրամասնությունները մեղմ են լինում: Միայն փող, ուրիշ ոչ մի բան: Միայն դրամի համար դա արեցին»:

«Դրանց մեծահարուստներով մի խաբվիր: Նրանք բոլորն էլ մեր գումարով են հարստացել: Պողոսի ընտանիքի ֆինանսական դրությունը ժամանակին շատ լավ էր, և Քերեմոջուն, Պողոսի որդեգրելով, տիրացալ նրանց ողջ ինչքին: Այդպես է եղել նաև բոլոր մյուս երեխաների դեպքում: Չէ՞ որ այդ ընտանիքները թողել են ոչ միայն իրենց երեխաներին, այլ նաև՝ ողջ ունեցվածքը: Տեղահանությունից հետո մնացած գույքին տիրացան բոլոր նրանք, ում ուժը պատեց»:

Թարգմանեց ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՅԱՆԸ
Akanq.net

ԵՐԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու Կրասնոդար

Մենք ինչո՞ւ ենք հեռանում հայրենիքից... որովհետև այնտեղ դժվար է ապրել. որովհետև ձգտում ենք ապրել ավելի հզոր և կայացած երկրում. որովհետև դարերի ընթացքում մեր և ուրիշների մեղքով սեղմված, կույզ եկած տարածքը ճնշում է մեր սահման չճանաչող, տիեզերաչափ մտքի թռիչքն ու ճախրանքը. որովհետև անհանդուրժող ենք յուրայինի սխալի կամ անբարյացակամության հանդեպ և օտարի անտարբերությունը գերադասում ենք հարազատի խեղ հայացքին. որովհետև հեռուները ձգում են չճանաչված հրապույրի կամ երևակայական խոստումների նրբերանգներով, թե՛ առանց կարոտի չենք կարողանում ապրել... Պիտի հեռանանք, որ սիրե՞նք, լավ է միայն այնտեղ, ուր մենք չկա՞նք: Ո՞ւմ ենք թողում արյան գնով ազատագրված Արցախը, դեռևս երիտասարդի անվստահությամբ մեծ աշխարհում կայանալու հեռարաններ փնտրող Հայաստանը, ու՞մ...

- Մայրիկ, որտե՞ղ ենք եկել,- մոր փեշից քաշում և շշնջում է փոքրիկ տղան:

- Հայկական եկեղեցի, այստեղ կարող ես հայերեն խոսել...- պատասխանում է մայրը և, մի տեսակ, մեղավոր ժպտում:

- Մայրիկ, Հայաստան ենք եկել: Կարելի՞ է ջուր խմել, - աշխուժանում է փոքրիկը, ցույց տալով ցայտադրված:

- Այո, Հայաստան ես եկել, տղաս,- չեմ կարողանում չմիջամտել, - և եկեղեցու բակի պուլպուլակի ջուրն էլ ուղիղ երևանից է այստեղ գալիս:

- Հա՛, - մի պահ ապշած դեմքիս է նայում երիտասարդ կինը, հետո հասկանալով հարցի անմտությունը, նորից ժպտում է մեղավոր ժպիտով ու հարցնում,- դուք այստեղ ծուխեր են չե՞ք սովորեցնում, երեխան պետք է սովորի, որ դպրոց գնա, մենք Հայաստանից նոր ենք եկել, նա ծուխեր են չգիտի:

- Մենք այստեղ հայերեն ենք սովորեցնում, իսկ ինչո՞ւ եք եկել Հայաստանից: Զէ, չենե՞րանք, նույն բանը դուք կարող եք ինձ հարցնել, ուղղակի գուցե մի նոր պատասխան ունե՞ք...

- Աշխատանք չկա...

- Իսկ այստե՞ղ կա:

- Դե մի բան կգտնենք, ինչ գործ պատահի կանենք, դուք էժան կացարանի տեղ չգիտե՞ք...

Այստեղ մի բան կանենք, այստեղ ամեն ինչ կանենք՝ բեռնակրություն, պահակություն, բանվորություն, կվարձենք մի համեստ կացարան, առանց տարրական հարմարությունների, կամաչենք երեխաների հետ փողոցում խոսել, որովհետև ծուխեր են չգիտենք... ոստիկաններից կթաքնվենք, որովհետև համապատասխան փաստաթղթեր չունենք, բայց հայրենիք չենք վերադառնա, այնտեղ դժվար է ապրել... «գատո» մի քանի տարի հետո կտեղավորվենք, մեր երեխաները արդեն ամեն ինչ կունենան... Օրերը կրկնվում են, տարիները պատճենվում են, պատմությունը անողոք դասեր է տալիս, իսկ մենք համառորեն շարունակում ենք նույնը, նույնը, նույնը...

Համաշխարհային տարաբնույթ խմորումների խառնարանում մի կողմից փորձում ենք ինտեգրվել համընթաց հոսանքներին, մյուս կողմից կղզիացնել այն ամեն ազգայինը, որ միայն մերն է, դարերից ու հազարամյակներից ավանդված:

Հյուսիսային Կովկասում հայերը սկսել են ապրել 15-րդ դարից: Իսկ 19-րդ դարի 90-ականներից սկսած, հայտնի պատճառներով Պատմական Հայաստանից նորանոր հոսքեր էին գալիս այստեղ: Ամբողջական բնակավայրեր են կառուցվել, փողոցներ և թաղամասեր, տներ և շենքեր, եկեղեցիներ և դպրոցներ, թատրոններ և գրադարաններ... ու սփռվել են անհամար գերեզմաններ... հայատառ, հայախաչ, հայապատկեր:

«Արմատո» ամրացում է արմատները



Երազիկ Հարությունյանը դասի ժամանակ:



Նորակառույց «Վարդանյան» մշակութային կենտրոնը:

Եվ հողին մեջ ուրիշին Քու ոսկորները անտեր Ցուրտեն հավետ կմրսին...

Կրասնոդար քաղաքի պատմության մեջ ևս հստակ նշմարելի է հայկական ծեռագիրը՝ ճարտարապետությունից մինչև կենցաղ: Կենտրոնական փողոցների տասնյակ շենքերի նորածն շարքի տակ դեռ նշմարվում է շինարարության ու նախշաքանդակների հայկական ոճը: Այստեղ դեռևս նախատվետական շր-

էին երկուհարյուրամյա այս քաղաքում փորձեցին որոշ ազգային կառույցներ ստեղծել, որոնք շուտով համախմբվեցին Արցախի ազատագրական պայքարի և նորանկախ Հայաստանի Հանրապետության կայացման շուրջ: Հիմնադրվեց «Մաշտոց» միությունը իր թերթով, հանրակրթական ցանցում բացվեցին հայոց լեզվի խմբակներ, եռանդուն ջանքերի արդյունքում ծեռք բերվեց բավականին ընդարձակ մի հողակտոր, ուր տեղադր-



«Ես Եղեռնի չորրորդ սերունդն եմ» միջոցառման ժամանակ:

ջանում գործում էին հայկական եկեղեցի և ամենօրյա դպրոցներ, տպագրվում էին թերթեր: Ազգային կուրիտը վերացնելու խորհրդային համահարթման մամլիչի տակ շատ բան վերացավ և կորսվեց: Ութսուն-իննսունականների թարմ հովերի թևերով հայրենանվեր մարդիկ, որոնց մի մասը իրենց գերդաստաններով բնիկներ

վեց առաջին խաչքարը... Հազար ու մի կերպ փոփոխվեց կյանքը, հին մարդկանց փոխարինեցին նորերը, խաչքարը դարձավ եկեղեցի, հիմնադրվեց ընթերցողների կայուն դաշտ և համբավ ունեցող «Երկրամաս» թերթը, հրատարակվեցին գիրք ու ամսագիր, կառուցվեց Առաջնորդարանի հողակերտ

շենքը, կազմավորվեցին հայապահպան կենտրոններ, մի եկեղեցին դարձավ երկու, մի խմբակը դարձավ երեք ու չորս, մի կիրակնօրյա դպրոցը դարձավ երկու... դրվեցին Մայր տաճարի, նոր մշակույթի կենտրոնի և քառասուրյակ դպրոցի հիմքերը, հայերի քանակը ավելացավ հարյուրներով ու հազարներով... Ինչքան էլ փորձենք զանազանել այս բոլոր ընթացքների դրական ու բացասականը, լավն ու վատը, ծեռք բերածն ու կորցրածը, միևնույն է, ունենք այն ինչ ունենք. երկու փոքրիկ պետություն... և մի ընդարձակ Սփյուռք որի մեծ համանվագի մի ելևէջն էլ Կրասնոդարի հայկական կյանքն է:

Այստեղ ապրում, դժբախտաբար՝ համարվում ու զարգանում է հայկական աշխարհը և նրա ամենազգուցող դրանջներից է Հայ Առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի Հայոց թեման առընթեր գործող «Արմատ» կիրակնօրյա դպրոցը (նախկինում՝ «Խաչքար»), որ տեղակայված է սբ. Հովհաննես Ավատարանից եկեղեցու ծառագարդ բակում: Այն հիմնադրվել է 2007թ. «Խաչքար» ամսագրին զուգահեռ, բարերար Անդրեյ Ամոսովի օժանդակությամբ: Ամսագիրը ունեցավ ընդամենը հինգ տարվա կյանք, իսկ դպրոցը շարունակում է իր յոթերորդ ուսումնական տարին:

Այս դպրոցը թեև ընդունված կարգով կոչվում է կիրակնօրյա, բայց աշխատում է շաբաթը հինգ օր: Այստեղ նոր խմբերում ընդունելություն կատարվում է երեք անգամ՝ սեպտեմբերին, հունվարին և ապրիլին: Ամեն տարի ընդունվում է շուրջ երեսուն նոր երեխա, աշակերտների թիվը տատանվում է 120-150-ի շուրջ: Նրանք ուսումնասիրում են ժամանակակից հայոց լեզու, գրականություն, հայ ժողովրդի պատմության, մշակույթի և ազգագրության հիմունքներ, մի խոսքով՝ հայրենագիտություն: Յուրաքանչյուր խումբ 90 րոպեանոց դասի է գալիս շաբաթական 1-2 անգամ: Բոլոր եկեղեցական և ժողովրդական տոների ու նշանավոր տարեթվերի առիթով այստեղ կազմակերպվում են գրական-գեղարվեստական միջոցառումներ: Խմբերը կազմված են 8-12 աշակերտներից և ունեն իրենց անվանումները՝ «Փոքր Միեր», «Սասունցի Դավիթ», «Մեսրոպ Մաշտոց», «Տիգրան Մեծ», «Ռուբարտու», «Խաչքար» հիմնական խմբեր, որոնց ուսման տևողությունը երեք տարի է և ավագ խմբեր՝ ուսման տարիներ ժամկետներով և իրենց առջև դրված ամենատարբեր առաջադրանքներով. «Հայկ», «Արա Գեղեցիկ», «Նարեկացի», «Կոմիտաս», «Արարատ», «Մեծ Միեր», «Գարեգին Նժդեհ», «Անդրանիկ» և այլն:

«Արմատ» դպրոցը սերտ համագործակցության մեջ է ՀՀ կրթության և գիտության ու Սփյուռքի նախարարությունների հետ, մասնակցում է համահայկական բոլոր միջոցառումներին: Այս դպրոցի աշակերտները 4 անգամ գլխավոր մրցանակ են շահել «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով գրական ստեղծագործության համահայկական մրցույթում և արժանացել պատվոգրերի Երևանի Գեղագիտական դաստիարակության կենտրոնի՝ պատմվելի նկարիչների ամենամյա մրցույթում: Ավանդական է դարձել մասնակցությունը տարբեր առարկաների համահայկական օլիմպիադաներին:

Դպրոցի հիմնադրումից հետո շատ քիչ ժամանակ պահանջվեց, հավանաբար ուսուցիչները, որ ծուխախոս երեխային հայկական դպրոցի դասագրքերով շաբաթական մեկ երկու դասաժամի ընթացքում հայերեն չես սովորեցնի: Ռուսախոս միջավայրի համար եղած ուսումնական ծեռնարկները կամ ժամանակավորեալ էին, կամ անհետաքրքիր: Հայկական դպ-

րոցն ունի հնամյա ավանդներ, իսկ Սփյուռքը՝ մայրենի լեզվի դասավանդման հարյուրամյա փորձ: Թվում է՝ ոչ մի նոր խոսքի կարիք և հնարավորություն այս ասպարեզում չկա: Սակայն, յուրաքանչյուր միջավայր և ժամանակաշրջան ծնում են իրենց յուրահատկությունները, և կրթության, դասավանդման մեթոդաբանական համակարգում կարծրատիպեր լինել չեն կարող: Կիրակնօրյա դպրոցում հայերենը դասավանդվում է որպես օտար լեզու, յուրաքանչյուր աշակերտ ցանկանում է կարճ ժամկետում հասնել շոշափելի արդյունքների՝ գործադրելով մինիմալ ջանքեր: Շեշտը առաջին հերթին դրվում է բանավոր խոսակցական լեզվի վրա: Այս պահանջները բավարարող դասագրքերը օրապահանջ էին:

Հիմք դրվեց կրթական նոր օրագրերի, որոնց արդյունքում ծնվեց «Արմատ» եռամսյակ կրթական համալիրը: Այն հավանության է արժանացել ՀՀ Կրթության ազգային ինստիտուտում և երաշխավորվել ՀՀ Կրթության և գիտության ու Սփյուռքի նախարարությունների կողմից:

Համալիրի առաջին գիրքը «Փոքր Մեծեր» ուսումնական ձեռնարկն է, որը նախատեսված է 5-14 տարեկան երեխաների համար և լրացնում է այբբենարանից առաջ և հետո խոսակցական լեզու զարգացնելու բացը: Այն բաղկացած է 25 դասերում ամփոփված կենցաղային թեմաներ բացահայտող դասակարգից, ուսուցչի կամ ծնողի համար կազմված «Մեթոդական ցուցումներից», նկարազարդ ներդիրներից, գործածական բառերի հայ-ռուսերեն բառարանից և դասերը հնչեցնող ձայներից: Դասընթացի վերջում երեխան հստակ յուրացնում է 600 բառ, արտահայտվում է այդ բառերի շրջանակներում, օգտագործելով գոյականի թիվն ու հոլովները, բայի ներկա, անցյալ (վաղակատար, բերկա) և ապառնի (ապակատար ներկա և պայմանական ապառնի) ժամանակները, բացարձակ թվականները: Գիրքը կարող է օգտագործվել այբբենարանից առաջ, նրան զուգահեռ և նրանից հետո՝ բանավոր խոսք զարգացնելու համար:

Երկրորդ՝ «Սասունցի Դավիթ» այբբենարանում, որը պատրաստվում է հրատարակության, շատ հետաքրքիր և ինքնատիպ մեթոդիկայով ընդամենը 12 դասի միջոցով (25 դասաժամ) ուսուցանվում է հայոց այբուբենը: Այբբենարանը զերծ է ավելորդ գրքային բառերից, հարուստ է գեղեցիկ շուտասելուկներով, մանկական հեղինակային ոտանավորներով, գործածական բառերով և արտահայտություններով, որոնք զարգացնում են արտասանության և ընթերցանության հմտություններ: Թեթև և մատչելի աշխատանքային տետրի օգնությամբ աշակերտները արագ յուրացնում են տառերի գրաֆիկական, ուղղագրական անհրաժեշտ կանոններ: Գիրքը նախատեսված է 8-14 տարեկան դպրոցականների համար:

Երրորդ՝ «Մեծ Մեծեր» ուսումնական ձեռնարկը, բաղկացած դասագրքից, աշխատանքային տետրից և ձայներից, հաղորդում է ավելի հիմնավոր և սխառմատիկ գիտելիքներ, նախատեսված է ավելի հասուն տարիքի պատանիների և երիտասարդների համար (15-ից բարձր), ներառում է 30 դաս, ուսուցանում է տառուսուցման, գրել-կարդալու, խոսել-արտահայտվելու կարողություններ:

Հաշվի առնելով, որ Սփյուռքում հայոց լեզուն զրկված է գործնական բոլոր գործառնություններից, և նրա պահպանումը զուտ հայրենասիրության և արմատների նվիրվածության նշան է, երիտասարդներին և պատանիներին հայկական կրթական կառույցներում ներգրավելը ենթադրում է առաջնահերթությունների ճիշտ գիտակցություն, բազմամաս հմտություն և ճշգրիտ կառուցակարգ: Պարբերաբար, նորածնությանը համընթաց, որոնվում են նոր մեթոդներ և ուղիներ: Բոլոր պատեհ առիթներով գովերգվում են մեր բարքերի ու կենցաղային սովորությունների առավելությունները: Պարզաբանվում է այն փաստը, որ ազգային պատկանելիության հստակ գիտակցումը ապահովում և սնուցում է սկիզբ, արմատներ ունենալու



Կրտսեր խմբի երեխաները ուսուցչուհի Արշալույս Երեմյանի հետ:



Տեր-Հարություն ավ. քահանա Բայաղյանը աշակերտների հետ:



Միջին դպրոցական խմբի աշակերտները Մեքսիդա Հովհաննիսյանի հետ:



Դպրոցի առօրյայից:

և դրանց կապված լինելու անհատի ապրումը, հոգեբանական անվտանգության և կայունության զգացումը: Ազգային սովորություններին հավատարիմ լինելը, ավանդապաշտ մնալը պահպանողականություն է, դա ուժեղություն և ինքնավստահություն է հաղորդում մարդու խառնվածքին:

Մշտապես նորոգվում է հիմնական սկզբունքը՝ երեխան պետք է գա հայկական դպրոց, որպես տոնի, հաճելի հաղորդակցման, ուր իրեն սիրում են, հասկանում են, միշտ պատրաստ են օգնել: Լեզվամտածողությունը ազգային երևույթ է և արժեք: Մայրենի լեզվի հետ ամենամակերեսային շփումն անգամ պետք է պարզևի հոգեկան ներդաշնակություն և բավարարվածություն: «Արմատ» դպրոցը Կրասնոդարի հայերի համար դարձել է այն ամենաջերմ օջախը, ուր անսքող կարելի է մտնել ցանկացած տրամադրության դեպքում, ցանկացած խեղճով, խնդրանքներով և առաջարկություններով կիսվելու համախոհների հետ: Այստեղ հավասարաչափ իրենց լավ են զգում և՛ հինգ տարեկան փոքրիկը, որ նկարներով և տեսանյութերով սովորում է իր առաջին հայերեն բառերը, և՛ հիսուն տարեկան, արդեն տատիկ դարձած հայ տիկինը, որ նոր է միայն հասկացել, թե ինչն է իրեն խանգարում հոգեկան բավարարվածություն ձեռք բերել, և՛ քսանամյա երիտասարդը, որ ցանկանում է ուղղել ծնողների սխալը և որոնել արմատների մատնանշած հետաքրքրությունների ամենալայն շրջանակները... Եվ այս այն միակ վայրն է, ուր միասին կարելի է երազել Հայաստանի հզորության և տունդարձի մասին, երազել, ձգտել, ուղիներ որոնել, առաջարկություններ անել, երբեմն էլ հայաստաստ նախածեռնություններ հեղինակել:

Հայկական դպրոցը, հայկական եկեղեցին կամ մշակութային կենտրոնը Սփյուռքում պետք է ընկալվեն ոչ միայն իրենց բուն բովանդակությամբ, այլ առաջին հերթին, որպես հայրենիքի խորհրդանիշ և ներկայացուցչություն: Եվ նրանց շուրջը համախմբվելով միայն կարող ենք ստեղծել հոգևոր հայրենիքի այն տեսական կերպարը, որը կարող է ապագայում ձեռք բերել նյութական արժեք և զորություն:

Եվ յուրաքանչյուր հայ պետք է գիտակցի, որ Սփյուռքը միշտ էլ ծուլման ճանապարհին է, բոլոր նվիրյալների խնդիրը ընդամենը ծուլման պրոցեսը դանդաղեցնելն է: Հայը հայ է մնալու միայն իր հողի վրա: Յուրաքանչյուր մարդ այս աշխարհ է մտնում որոշակի ուղեգրով, պարզապես պետք է ճիշտ մեկնել այդ ձևակառուցող կոչված գրությունը և ինքնաբացահայտվել այն շրջապատում, ուր քեզ աշխարհ են բերել քո ծնողները: Հայ ժողովրդական դարերում թրծված իմաստությունը ասում է. «Տեղդ փոխեցիր, բայտող չես փոխի», իսկ ձևակառուցողի հետ հաշտ ու խաղաղ ապրելու կարողությունը երջանկության թովիչ ապարանքի միակ հրաշագործ բանալին է:

- Անունդ ի՞նչ է,- հարցնում են խոշոր աչքերով, երկար ունքերով սպիտակամաշկ տղային: Վախվորած նայում է մորը, ապա շշնջում:

- Տիգրան:
- Բարձր ասա, Տիգրան, գնացի՞նք, այստեղ մեր դպրոցն է, ես քեզ կսովորեցնեմ ռուսերեն, մի քիչ կսովորես, հետո միասին կվերադառնանք Հայաստան, ուզո՞ւմ ես: Տիգրաններ այստեղ պետք չեն, տիգրաններ մեր երկրում են պետք, համաձայն ես:

Աշխուժացած գլխով է անում... Ինքը չի ուզում շշուկով խոսել և ընկերներ չունենալ, ինքն ուզում է ազատ վազվզել հարազատ բակում և սպասել մոր բակով մեկ հնչող կանչին՝ Տիգրան, տուն արի, Տիգրան արի տուն... Տուն...

Լույս առավոտի...
Արեգակ արդար...
Աստված ճշմարիտ,
Երկրպագողն ենք մենք քո զորության,
Ներիր մեղսական տենչանքները մեր,
Եվ ցույց տուր ուղին ներդաշնակության:

Գրական-երաժշտական երեկո Սուխումի Յովի. Թունանյանի անվան դպրոցում՝ նվիրված Դըրմիտ Գուլիայի 140-ամյակին



Դըրմիտ Գուլիայի կյանքի ուղին: Խորհրդային իշխանության հաստատումն Աբխազիայում նա միանշանակ չի ընդունել: Երիտասարդ սկսնակ գրողներ Իուա Կոդոնիան, Միխայիլ Լակերբայը, Լևրսե Կուծնիան և ուրիշներ նկատելիորեն հեշտ են ընդունել նոր ժամանակները: Եվ տասնամյակներ շարունակ լքել է Գուլիայի քնարը, այսինքն՝ նա չի ստեղծել խորհրդային իշխանությունը փառաբանող գեղարվեստական ստեղծագործություններ, թեև իր հրապարակախոսական հոդվածներում խորհրդային իշխանության



Աբխազիայի հայերի միության նախաձեռնությամբ Դըրմիտ Գուլիայի 140-ամյակին նվիրված գեղեցիկ գրական-երաժշտական միջոցառում անցկացվեց Սուխումի Հովհաննես Թունանյանի անվան միջնակարգ դպրոցում՝ հանրապետության մի շարք հայկական դպրոցների մասնակցությամբ: Աշակերտների կատարմամբ հնչեցին Գուլիայի բանաստեղծություններն աբխազերեն, հայերեն ու ռուսերեն լեզուներով: Հայկական ու աբխազական պարերի կատարումով հանդես եկան Ցանդրիփչի, Սուխումի, Մարխաուլի, Ցանբելուարայի միջնակարգ դպրոցների պարային համույթները: Միջոցառմանը մասնակցեցին և շնորհակալական խոսքով ելույթ ունեցան Աբխազիայի կրթության նախարար Դաուր Նաճղեբիան, գրող, խորհրդարանի փոխխոսնակ Էմմա Գամիսոնիան, պատգամավորներ Լևոն Գալստյանը, Ռոբերտ Յայյանը, Գուլիայի անվան պետական մրցանակի դափնեկիր Զումա Ախուբան, գրող Վադիմիր Բասարիան, Աբխազիայի հայերի միության նախագահ Խաչիկ Մինասյանը, «Համշեն» թերթի խմբագիր Արտավազ Սարեցյանը, որը միջոցառման մասնակից, Գուլիայի շրջանի Մարխաուլի հայկական միջնակարգ դպրոցի աշակերտուհի Վիկտորյա Ավջյանին հանձնեց Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարության Ընդհանրակազմի Վանահայկական մանկապատանեկան «Հայկական լեռնաշխարհից ծնված ոգին» խորագրով նկարչական 4-րդ մրցույթ-փառատոնում խրախուսական մրցանակի արժանանալու համար:

Դըրմիտ Գուլիա... Նվիրական այս անունը հավատի լույսի հանգույն անմար է յուրաքանչյուր աբխազական օջախում, յուրաքանչյուր աբխազի սրտում: Ափսո՛հ՝ Հոգու Երկիր կոչվող աշխարհում յուրաքանչյուր ոք գիտակցում է Դըրմիտ Գուլիայի անձի անփոխարինելի նշանակությունը հարազատ ժողովրդի պատմական ճակատագրի քառուղիներում:

Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, գիտնական, աբխազական գրականության հիմնադիր, առաջին աբխազական թերթի խմբագիր, առաջին աբխազական թատերական խմբի հիմնադիր ու ղեկավար: Մեծ է, բազմազան ու անզնահատելի լուսավորչի ներդրումն իր ժողովրդի մշակույթի մեջ:

«Իմ ամբողջ կյանքում աշխատանքի մեջ, Հանց լեռնային գետ», - գրել է Գուլիան իր բանաստեղծություններից մեկում: Հիրավի, իր ամբողջ կյանքում նա լեռնային ջրի նման հոդողորհ է եղել՝ անխնա աշխատելով զոր ու գիշեր:

Մեզ՝ հայերիս համար անսահմանորեն գնահատելի է նաև այն փաստը, որ Դըրմիտ Գուլիայի անմիջական մասնակցությամբ 1954 թվականին ստեղծվել է Աբխազիայի հայ գրողների «Անծովյան այգաբաց» գրական միավորումը, որն այս տարվա սեպտեմբերին կդառնա 60 տարեկան:

19-րդ դարի 90-ական թվականներին Դ.Գուլիան ուսուցչություն է արել Օչամչիրայի Կուստուլ գյուղի՝ իր ջանքերով բացված աբխազական դպրոցում:

Գուլիան մեծ հեղինակություն ու ժողովրդականություն էր վայելում, անսահմանորեն հարգված էր ու սիրված: Իսկական իրադարձություն էր աբխազների կյանքում, երբ 1907 թվականին Թիֆլիսում աբխազերեն և ռուսերեն լույս տեսավ նրա կազմած «Աբխազական առածներ, հանելուկներ և շուտասելուկներ» ժողովածուն: Աներևակայելի էր. աբխազը նման գիրք է հրատարակել՝ անդրադառնալով ժողովրդական իմաստությունը: Այնքան մեծ էր այդ գրքի նշանակությունը, որ Զգարդա գյուղի ավագանին համաժողովրդական տոնախմբություն կազմակերպեց:

Գուլիայի անձի նշանակությունը գիտակցում էին բոլորը: Այսպես, 1920 թվականին աբխազ նշանավոր հրապարակախոս Միխայիլ Չալմազը «Ափսո՛հ» թերթում գրել է. «Մեզ՝ աբխազներիս համար, Դըրմիտ Գուլիան հավասար է Լոմոնոսովին, Շոթա Ռուսթավելուն, Սոկրատեսին: Բայց մենք ե՛րբ կհասկանանք նրան և կսկսենք օգնել ու սատարել»:

Գուլիան անսահմանորեն շատ է արել աբխազ երիտասարդ տաղանդավոր ստեղծագործողների համար: Այսպես, նրա ղեկավարությամբ 1919-1925 թվականներին Սուխումի ուսուցչական ձեռնարանում գործում էր գրական խմբակ: Այստեղ սկսնակ գրողները Գուլիայի ներկայությամբ կարդում էին իրենց ստեղծագործությունները, իսկ հետո քննարկում էին դրանք: Խմբակն ուներ իր ձեռագիր գրական ամսագիրը, որը կոչվում էր «Շարվը-եցվա» («Վաղորդյան աստղ»): Այստեղ լույս են տեսել Իուա Կոդոնիայի, Չաժ Դարսալիայի, Իվան Պապասկիրի առաջին թոթովանքները:

Աբխազ գրողներն ու գիտնականներն ակնածանքով էին վերաբերվում նրան: Նշանավոր գիտնական, պատմաբան Գեորգի Չիժարիան չէր հոգնում կրկնել, որ 40-ական թվականների վերջին և 50-ականների սկզբին, երբ աբխազների ճակատագիրը մագից էր կախված, և արդեն քայլեր էին ձեռնարկվում նրանց տեղահանելու ուղղությամբ, Դըրմիտ Գուլիայի անունը մեծ նշանակություն է ունեցել ժողովրդի պահպանման գործում: Ամեն անգամ, երբ Ստալինը այցելում էր Աբխազիա, անպայման հետաքրքրվում էր. «Ինչպե՞ս է ապրում ծերուկ Դըրմիտ Գուլիան»:

Դեռ 1913 թվականին ակադեմիկոս Նիկոլայու Մառը գրել է. «Անկասկած է, որ մինչև այսօր ոչ ոք այն սահմաններում, ինչպես Գուլիան, միաժամանակ չի հետաքրքրվել Աբխազիայի անցյալ ճակատագրով ու ապագա կենցաղով, ոչ մի գիտնական ո՛չ Եվրոպայում, ո՛չ էլ Կովկասում, չի բարեհաճել և դեռ երկար ժամանակ չի բարեհաճելու աշխատանքներ ձեռնարկել անկեղծ հետաքրքրության խորությամբ, ինչպիսիք արդեն իսկ պատրաստ են Գուլիայի մոտ»:

Անշուշտ, հարթ ու խաղաղ չի եղել

նրան որոշ դրական կողմերն է նշել, իսկ ավելի վաղ՝ 1917 թվականին, մի բանաստեղծությամբ ողջունել է փետրվարյան հեղափոխական իրադարձությունները Պետրոգրադում: Բայց չարդարացան Գուլիայի ակնկալած մեծ բարեփոխումները:

Ինչպես հայտնի է, Դըրմիտ Գուլիան Աստվածաշնչի աբխազական թարգմանության չորս հեղինակներից մեկն է եղել, ինչի համար էլ ենթարկվել է սուր քննադատության: Անասելի ծանր փորձություն էր հավատացյալ Դըրմիտ Գուլիայի համար, երբ 1927 թվականին Նոր Աֆոնի վանքի բակում անխղճորեն այրեցին Աստվածաշնչի ամբողջ տպաքանակը:

1928 թվականին հիմնադրվեց Աբխազիայի գրողների ասոցիացիան, և Դըրմիտ Գուլիան ստացավ անդամության թիվ 1 գրքույկը, սակայն հետո նա չընդգրկվեց ասոցիացիան գրողների միության վերափոխելու համար ստեղծված կազմակերպչական կազմում, որը տեղի ունեցավ 1933 թվականին: Իսկ 1934-ին նա չընտրվեց ԽՍՀՄ գրողների առաջին համագումարի պատգամավոր: Եվ դա ցավալի պատահականություն կամ թյուրիմացություն չէր:

30-ական թվականների սկզբին Գուլիան իր «Աբխազիայի պատմություն» գրքի համար ենթարկվեց դաժան քննադատության: Գիրքը հայտարարվեց հակամարքսիստական, հակաժողովրդական, և հեղինակին հրաշքով հաջողվեց խուսափել բռնաճշումից: Սակայն Գուլիան երբեք չի կորցրել ոգու արիությունը, միշտ էլ սատարել է երիտասարդ ստեղծագործողներին, և 1954 թվականին դառնալով ԽՍՀՄ գեղարվեստի խորհրդի պատգամավոր, ամեն ինչ արել է հանուն իր ժողովրդի բարգավաճման: Եվ երբ լույս տեսավ Ինգորովայի գիրքը, որն աբխազների «եկվորություն էր ապացուցում», Գուլիան գրում է իր հեշակավոր «Ահա ով եմ ես» բանաստեղծությունը: «Ո՛վ ես դու» հարցին

նա պատասխանում է.

Որդին եմ հողիս: Իսկ ավելի ճիշտ՝ Որդին եմ աբխազ ժողովրդի: Ես Հետնորդն եմ նրանց, ովքեր չեն այրվել

Բոլոր դարերի հրդեհներում գոռ: Ե՛ս եմ հարազատ լեռներիս որդին, Որդին եմ հողիս, ուր նախնիներն իմ Պառկած են հիմա...

Իհարկե, այսօրվա ընթերցողը նախատելու պես կարող է ասել, որ Դըրմիտ Գուլիան բանաստեղծություններ և անգամ մի ամբողջ պոեմ է նվիրել «ժողովուրդների հոր» 70-ամյա հոբելյանին: Բայց ո՞ր խորհրդային գրողն այն տարիներին Ստալինին փառաբանող բանաստեղծություններ չի գրել:

Անձի պաշտամունքի սարսափելի տարիներին, ինչպես գրել է Վարպետի որդի, հայտնի արձակագիր Գեորգի Գուլիան, «նրան փրկել է կենդանի կայսր իր ժողովրդի հետ, նա ոչ մի բան էլ չէր իր պաշտոնը, միշտ էլ գտնվել է ժողովրդի մեջ, որի հետ խոսել է մայրենի լեզվով, բարի խոսք է բերել նրան և իրեն երբեք չի գիտակցել առանց իր ժողովրդի: Եվ այս օրգանական միասնության մեջ անձնականը միշտ էլ գիշել է ժողովրդի հանդեպ ունեցած պարտքի զգացումին: Ժողովուրդը միշտ էլ նրա հենարանն է եղել, և դա Գուլիային ճանաչում է բերել, հաջողություններ ու համընդհանուր սեր»:

Այդ սիրո ու հարգանքի արտահայտությունն է Դըրմիտ Գուլիայի ստեղծագործության թարգմանությունը աշխարհի բազմաթիվ լեզուներով: Նրա առանձին ստեղծագործություններ թարգմանվել են նաև հայերեն, որոնք, ցավոք սրտի, սխռված են տարբեր պարբերականների էջերում, և ժամանակն է դրանք չի մի բերելու՝ առանձին գրքով հրատարակելու համար:

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՐԵՑՅԱՆ
Սուխումի «Համշեն» թերթի խմբագիր

ԴԸՐՄԻՏ ԳՈՒԼԻԱ
ԵՂՋԵՐՈՒՆ

*Կանգնել է ահա գեղեցիկ ու վեհ՝
Գետամերձ զարգանդ շնչող բարձունքին,
Եղջյուրներն ասես՝ եռամյա շամեր,
Խաղողի որթ են ոտները նրբին:*

*Թող որ պաշարված, թող որ վիրավոր,
Մեր առջև պարտված չճնկեց սակայն,
Լոկ մի ակնթարթ համրացավ հզոր,
Որպես կենդանի քանդակ բնության:*

*Բարձունքի ներքո մշուշն է շաղվում,
Շխի մեջ մնալլ անդունդն է խրվել...
Այն, ինչ կարող էր, արեց եղջերուն,
Մնացել է լոկ արնաքամ գերվել...*

*Եվ արդեն ասես հնազանդ, հյու,
Հանձնվելու է իր վերջին շնչում,
Բայց ... ծա՛ռս է լինում ու նետվում
անդունդ,
Լոկ մի ակնթարթ դառնալով ... թռչուն:*

*Եվ մենք համրացած անդունդի եզրին
Նայում ենք նրան, հուզված հետևում,
Մինչև ... չկորա՛վ մշուշում դեղին՝
Առաջվա նման անպարտ ու սիրուն:*

*Եվ ուզում եմ ես երգել այն մասին
Իմ հայրենաշունչ քնարով հիմա,
Որ լավ է գոհվել ազատ ու ազնիվ,
Քան գոյատևել ստորուկի նման:*

Թարգմանությունը՝
ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՐԵՑՅԱՆԻ

«Երգից բառ դուրս չես նետի»

ՍԵՐՈՒՖ ՎԱՐՈՒՆՅԱՆ

Համշենի բարբառի խոսքային խոսվածքով (համշենակ) ստեղծագործող Յուսուֆ Վայիչին «Չայն համշենականի» ընթերցողները ծանոթ են 2010թ. NN 9-10-ից, որում բարբառով և արդի գրական հայերեն բարգձմանությամբ տպագրել էինք նրա երեք բանաստեղծությունները: Իսկ 2013թ. NN5-6-ում, կրկին զուգահեռ բարգձմանությամբ, ներկայացրել էինք նրա խոհերը մայրենի բարբառի ձևակառուցող մասին, NN7-8-ում տպագրել էինք Թուրքիայի ռազմական հեղաշրջման ժամանակ պատահած մի դիպվածի մասին նրա պատմածը: 1980թ. 19-ամյա Յուսուֆ Վայիչը ևս իր ծախսակողմյան հայացքների և այլ «մեղքերի» համար հալածվել է, 22 ամիս տանջվել էր գրումի բանտում: Ազատվելուց հետո 20 ամիս ծառայել է թուրքական բանակում: Այնուհետև աշխատել է մատուցող, խոհարար, նաև շինարար ու ճանապարհաշինարար, տրանսպորտային ոլորտում՝ գրասենյակային աշխատող և այլն: Ամուսնացած է, ունի երկու հասուն աղջիկներ, և ընտանիքն արժանապատիվ պահելու հոգսը մշտապես նրա հետ է: Ամեն անգամ խոսա գնալիս ես անպատճառ հանդիպում եմ Յուսուֆին: Զրուցելու շատ թեմաներ ունենք, հատկապես նրա նոր ստեղծագործությունների շուրջը, որոնք ես հավաքում եմ այն հույսով, որ մի օր կկարողանամ բնագրով ու իմ բարգձմանությամբ Երևանում, առանձին գրքով, տպագրել Յուսուֆ Վայիչի բանաստեղծությունները, որնցից մի քանիսը երգերի են վերածվել: Դրանցից մեկին՝ «Քուզին» երգին եմ այս անգամ ցանկանում անդրադարձնալ: Ինչպես նշեցի, տեքստը Յուսուֆին է, իսկ երաժշտության հեղինակը ծնունդով Հեղինե Գյուլից, այժմ Ստամբուլի բնակիչ Հարուն Թոփալօղլուն է: Այս երգը կատարում են տարբեր երգիչներ ու խմբեր: Ֆեյսբուքի շնորհիվ երգը տարածվեց, և մեր հայրենակիցներից ոմանք, ցանկանալով բարի գործ անել, պատրաստեցին տեսահոլովակներ՝ տեղադրեցին գեղատեսիլ պատկերներ, ձիշտ է, հարևան Ռիզեի նահանգից, բայց էլի համշենիցներին առնչվող: Ինձ անծանոթ մի հեղինակ, կարծելով, որ ինքը լիովին հասկանում է երգի բառերը, թարգմանել է և լատինատառ տեղադրել երգի տեսահոլովակի սկզբում: Իհարկե, բարբառը չիմանալով և բառերի արտաքին նմանությամբ առաջնորդվելով, հեղինակը մի շարք սխալներ է թույլ տվել և տեսահոլովակի շրջանառության հետ տարածվում են նաև այդ սխալները: Ուստի, ցանկանալով օգնել ինձ անծանոթ ընկերոջը և երգի սիրահարներին, Յուսուֆի վերջերս գրած երեք փոքր բանաստեղծությունների հետ թերթի այս համարում որոշեցի տպագրել նաև իմ թարգմանությունը:



Յուսուֆ Վայիչ

քից կամ «Չայն համշենական» թերթից: Հարգելիներս, հեշտորեն ընթերցվող այդ թարգմանությունների վրա ես անքուն գիշերներ եմ անցկացրել, հաճախ մեկ բառի իմաստային տարբերակները ճշտելու համար բազմաթիվ համշենիցների եմ հարցրել: Խնդրում եմ այսուհետ իմ թարգմանություններն օգտագործելիս պահպանել հեղինակային իրավունքի տարրական պահանջները և նշեք թարգմանչի անունը:

Բանաստեղծություններ

Յուսուֆ Վայիչ

Քուզին

Աաքազ էրթա չի, Թաքիդում փերեվա՞մ ա՛, Իսա ինչբես աշխար ա, Եմմեն դաղ խարեվա՞մ ա:

Երգիք² էլլուշ քուզիմ, Աստաղէ՞ փերնուշ քուզիմ, Լուսնիկային մէշնան հէդ Բէգի փուր էնուշ քուզիմ:

Երթուշ քուզիմ իսթի հէդ, Այէ հէդրա էրթաք մէք, Մէդոդում աշխարսիվա, Լուսնիկա էլլող ուք մէք:

Ուզում եմ (թարգմանություն)

Արեգակը չի գնում, Կարծում եմ խավարել է, Այս ինչպիսի աշխարհ է, Ամեն տեղ խառնված է:

Երկինք բարձրանալ եմ ուզում, Աստղ բռնել եմ ուզում, Լուսնի միջից Բեգ նայել եմ ուզում:

Ուզում եմ գնալ այստեղից, Արի միասին գնանք մենք, Մութ աշխարհիս վրա Լուսին ենք լինելու մենք:

1. «Փերեվա՞մ ա» նշանակում է «բռնված է», այսինքն՝ ինչ որ բան խոչընդոտում է նրա ընթացքին: «Փերեվա՞մ ա» են ասում նաև արևի խավարմանը, նկատի ունենալով, որ արևը լուսնի հետևի կողմում է մնում:
2. Ասում են և՛ «էրգիմք», և՛ «էրգիք»:
3. «Աստղ» բառի եզակիին ասում են «աստաղ», նաև «աստաղք», իսկ հոգնակին լինում է «աստաղքներ», «աստաղներ», «աստաղնի»:

Օրօլ աէր օշ

Օրօլ աէր օշ ու լավնար խօցես, Գըծբէլէցեր ու քընացեր, Հիմի մէրալէ փաթթօղ ա երգիմք, Չախ, գարգուղ աղար, քէնացեր, Օշ ու մէգ օրմ ալ փարթօղ չա: Սըրդաս գաթօղ ա աղունէս Աաքազին մէշնիվա:

Չթողեցիր (թարգմանություն)

Չթողեցիր, որ վերքս լավանար, Պոկեցիր* ու գնացիր, Հիմա ամաը պատելու է երկինքը, Անձրև, կարկուտ եղար, գնացիր, Ոչ մի օր էլ չի բացվելու: Սրտիցս կաթելու է արյունս Արեգակի մեջ:

*Բնագրում՝ գըծբէլէցեր, որը նշանակում է վերքի վրայի կաշին պոկեցիր, պլոկեցիր, վերքը պոկեցիր-արնոտեցիր:

Լըմանցենէլ չի գայիմ

Բէգի ումուց լըմանցենէլ չի գայիմ, Բէգի ում ու լըմանցենիմ, Լըմանցուցածէ՛ս նէքէվ, Թուն վէլեցա՞մ զըլլիս, Թուն, ալի թուն քէգի լըմանիս գու:

Նմանեցնել չեմ կարող (թարգմանություն)

Բեգ ոչ մեկի նմանեցնել չեմ կարող, Բեգ ում որ նմանեցնեմ, Նմանեցրածս՝ ներքևում, Դու վերևում ես լինում, Դու՛, էլի դու՛ ես քեզ նման:

Քիշերնիյէ

Քիշերնիյէ ցըմէրի լըմանի գուն, Յունան ջամփէդիքէ խըփվի գուն, Ուսի գէլի, դազէ մընաք գու, Վօ՞վ քիդա, շունչս քամվի գու, Վօ՞վ քիդա, մէդոդումին մէշնիվա Բիծի լուս մէ թիբնու գու:

Գիշերները (թարգմանություն)

Գիշերները ծնունդն ունեն, Զյունից ճանապարհները փակվում են, Զնահյուս է լինում, տակն ենք մնում, Ո՞վ գիտի, շունչս կտրվում է, Ո՞վ գիտի, մթության միջից Մի փոքր լույս կընկնի:

Амшенский рецепт от профессионала

Кнарик Атамовна Кочикян - профессиональный ресторатор, получившая профильное образование в одном из лучших советских учебных заведений - московском институте Народного хозяйства им. Плеханова.



Бонджаров абур

С древнейших времен, проживая на своих исторических землях, именуемых Армянским нагорьем, армянский народ проявил свой созидательный гений, распространяя семена цивилизации по всему миру. Вклад армян в копилку мировой цивилизации трудно переоценить - культура, образование, военное дело, архитектура, точные науки и многое другое. Из глубокой старины дошли до нас культура и обычаи наших далеких предков, зашифрованные также и в традициях национальной кухни.

Одной из разновидностей армянской кухни является амшенская, блюда которой, кроме прочего, имели ярко выраженную зерновую составляющую и разделялись на три основных рецептурных ряда: похлебки (արուր), каши (ջաշ) и хлебные изделия (հացեղեն). Похлебки были в основном двух видов - навары (խաշ), сборные супы (արուր) и считались у амшенцев менее престижными блюдами, чем каши, ввиду чего были широко распространены у средних и бедных слоев населения.

Одним из известных современных армянских исследователей амшенской кухни является Михаил Кузуб, проживающий в Туапсе. Описывая в своих трудах армянские рецепты, М. Кузуб с сожалением отмечал, что отсутствие материала о жизни городских трабзонцев не позволило ему более подробно и точно исследовать "эту сферу жизнедеятельности армянских общин". Восполняя данный пробел, сегодня вниманию читателей газеты представляется рецепт приготовления распространенного в среде трабзонских армян амшенского блюда

"Бонджаров абур" (суп из листьев темной капусты ("лохана")):

Красную фасоль предварительно замочить на несколько часов, можно на ночь. Поставить варить фасоль на среднем огне примерно 1,5-2 часа. Листья бонджара ("лоханы") крупно нарезать и добавить в бульон с фасолью, также добавить кукурузную муку мелкого помола для густоты супа. Растереть в ступке чеснок с острым перцем и заправить суп.

- Состав продуктов на 3л супа:
 Фасоль красная (сухая)-300гр
 Бонджар 600гр
 Кукурузная мука мелкого помола 3 ст. ложки
 Чеснок 5 зубчиков
 Красный перец 1 стручок.
 Соль по вкусу.
 Приятного аппетита

Уважаемые читатели газеты "Дзайн Амшенакан", обсудить с Кнарик Атамовой амшенские рецепты, предложить свои варианты вы можете по адресу: urartusochi@inbox

Սերգեյ Վարդանյան
<< ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության
ինստիտուտի գիտաշխատող

Թուրքիայում արված նոր գրառումներ

Ներկայացվող բանախուսական
նյութերը գրառել ենք Թուրքիայի
Արդվինի նահանգի Խոփայի և Բորչ-
կայի գավառների համընթաց
գյուղերում, 2013թ. օգոստոսին: Թեր-
թի առաջիկա համարներում կտ-
պագրենք բանախուսական այլ նյու-
թեր և:



Ասացողները ծախից աջ՝
Սերահաթ Թոփալօղլու, Սարիյե Թոփալ, Գյուլթեն Յիլդրան:

Բանախուսություն

Խաղիկներ

Յէ մա, սիրդէս ցավի գու,
Շալագ շալգէ չի գայիմ,
Հէրու քյաղին յար ունիմ,
Օբօլ էնէ չի գայիմ:

(Մայրիկ, սիրտս ցավում է,
Բռռ* շալակել չեմ կարող,
Հեռու գյուղում յար ունեմ,
Թողնել չեմ կարող):

*Բնագրում՝ շալագ, որ նշանա-
կում է շալակած տանելու բռռ:

Հայդէ էրթաք գերմաղա,
Քու գօվէ ձէնօղ չա՞ թա,
Քէգի հնծի դէվին օջ,
Քու դադէ մէրնօղ չա՞ թա:

(Արի գնանք պատատուկի,
Քո կովը չի՞ ծնելու,
Քեզ ինձ չտվեցին,
Քո հայրը չի՞ մեռնելու):

Սարիչայիրին դագնիմէ
Յաձէ մէրալէ էնգաձ ա,
Քա՛, հալա փաց աա,
Վօ՞վ մէրաձ ա, վօ՞վ սաղ ա:

(Սարիչայիրի* ներքում
Մշուշ է իջել,
Աղջիկ, ապա բացիր,
Ո՞վ է մեռել, ո՞վ է ողջ):

*Արդվինի նահանգի Շավշաթ
(Շավշեթ) գավառի սարերում գտն-
վող յայլայի, սարատեղի անուն է:

Մէրէմ ախչիգ, թուրէ փաց,
Մէնդիլէ մէչէ մէնաց,

Յէս մէնդիլէն գօր չունիմ,
Մէրէմէ մէչէ մէնաց:

(Մերեմ աղջիկ, դուռը բաց,
Թաշկինակը մեջը մնաց,
Ես թաշկինակով չեմ մտահոգ-
ված*,
Մերեմը մեջը մնաց):

*Բնագրում՝ գօր չունիմ, որը նշա-
նակում է նաև «խնդիր չունեմ, դժվա-
րություն չունեմ»:

Հանելուկներ

1. Չունգ ընգա ձագնիյուս խօթցի:
(Սընդուխը փօլնիյօվը փաց
էնուշէ)

(Ծնկի իջա անցքի մեջ խոթցի):
(Սնդուկը բանալիով բացելը)

2. Յէս գերթամ, ան ա գերթա,
Յէս խէչի գում, ան ա խէչի գու,
Յէս գունգնիմ, ան ա գունգնի գու:

(Ես գնում եմ, նա էլ է գնում,
Ես ընկնում եմ, նա էլ է ընկնում,
Ես կանգնում եմ, նա էլ է կանգ-
նում):

(Ստվերը)

3. Հաքվէնիյէ վեր քէլիմ,
Չաթալնիվա* նէ մէդնու գում:

(Փանթալօն)
(Առավոտները վեր եմ կենում,
Երկազի մեջ եմ մտնում):
(Տաբատ)

*Չաթալ- երկազի, ընդհանուր
հիմքով երկու ճյուղ: Եղանի նման,
բայց երկու ծայր ունեցող գյու-
ղատնտեսական գործիք:

4. Էրգէն շաթիք, բէգուլթէ՛ պաց:

(Աձ)
(Երկար շապիկ, տուտուզը՝
բաց):
(Այծ)
Առածներ և ասացվածքներ

1. Գըրգօղէ օսքօղէ բըզզգին չա-
փա գու, աման գուլ գուդա:

(Ազբավը ոսկորը տուտուզին է
չափում, հետո է կուլ տալիս:

2. Մարի* լիզուն սըրդին թուրն
ա:

(Մոր լեզուն սրտի դուռն է):
*Ասում են նաև մօր, մօրը:

3. Էրօնդ ախչիգէ սուսի համար
ա, չիրքին ախչիգէ փօնի համար
ա:
(Սիրուն աղջիկը ցույց տալու հա-
մար է, տգեղ աղջիկը աշխատելու

համար է):

4. Խաք օղէ ձագան հանի գուն,
թուն մէշնիյուս խօթս գու:

(Ուրիշները օձը ծակից հանում
են, դու մեջն ես խոթում):

5. Շաղ հաչօղան ինչիգ էլլի չի:
(Շատ հաչողից ոչ մի բան չի լի-
նում):

6. Փաղան մաշա* էլլի չի, քինա
փաշա էլլի չի:

(Փայտից ունելի չի լինի, քեզա-
նից փաշա չի լինի):

*Մաշա - այրվող փայտ, ածուխ,
փայտածուխ բռնելու երկճյուղ մե-
տաղյա հարմարանք, մեծ ու-
նելի:

Արդէլեցեց հօրթէ

Արդէլեցեց հօրթէ օջլօղաձ ա, կա-
զաղի քէսաձ ունիմ, օջիլէ վաթի դէ-
յի: Մէգ հօքի մէ աստաձ ունի թա,
քիֆրիտ մէ չաքմիշ էնիք, հալա ի՞նչ
էլլօղ ա: Քիֆրիտն ա չաքմիշ աղաձ
ունիմ անա, հօրթէ գայի, վէվէր թեր-
չի գու, վարի գու, թէրչէդի գու: Ան
արդէլեցին ա աստաձ ունի:

- Հօրթէ շաղ հազ աղաձ ունի
անա, խաղա գու, թէրչէդի գու,- աս-
տաձ ունի:

Ասացող՝ Գյուլթեն Յիլդրան,
ծնվ. է 965թ. Խոփայի գավառի
Խիզո գյուղում, 1989թ. հարս է
եկել Բորչկայի գավառի համընթաց-
իների Եշիլթոյ (նախկին Մա-
նաստըր) գյուղ, որի համընթացի
բնակիչները շուրջ 100 տարի
առաջ վերբնակվել են Խոփայի
Արդալա գյուղից:

Արդալացիների հորթը
(թարգմանություն)

Արդալացիների հորթը ոջլոտել է,
նավթ են քսել, որ ոջիլը թափվի: Մի
հոգի ասել է, թե լուցկի վառենք,
ի՞նչ է լինելու: Լուցկին որ վառել են,
հորթը վառվում է, վեր-վեր է թռչում,
ցավում է՝ թռչկոտում է: Այն արդա-
լացին էլ ասել է:

- Հորթին շատ է դուր եկել՝ խա-
ղում է, թռչկոտում է,- ասել է:

Panorama.am

Թուրքիայում լրագրողների միության նախագահ

Ահմեթ Աբաքայը բացահայտել է իր հայկական ծագման մասին

Թուրքիայում լրագրողների միու-
թյան նախագահ Ահմեթ Աբաքայը
գիրք է լույս ընծայել, որում նշել է, որ
82 տարեկան հասակում մահացած
իր մայրը՝ Հոշանան ունեցել է հայ-
կական արմատներ: Այս մասին տե-
ղեկացնում է «Hurriyet Daily News»-
ը:

Վերջինս նշել է, որ իր մորը
1915թ. իրադարձությունների ժամա-
նակ թողել են ալևիների ընտանիքի
դռան առջև: Ահմեթ Աբաքայը իր մոր
պատմության մասին գրել է. «Հոշա-

նանի վերջին բառերը» գրքում:
Աբաքայը նաև նշում է, որ իր մայրն
այդ մասին պատմել է մահանալուց
շաբաթներ առաջ:

«Իմ մայրը այս պատմությունը
պատմել է 13 տարի առաջ և դրանից
հետո քիչ ժամանակ անց մահացել:
Ես դրա մասին կարողացել եմ գրել
միայն 10 տարի հետո, քանի որ ես
տատանվում էի: Ես հազիվ եմ կա-
րողացել այն գրել, արցունքներն աչ-
քերիս ես գրում էի այդ մասին: Ես
չէի պատկերացնում, որ այն ինձ

այդքան ցավ կպատճառի», -նշել է
Ահմեթ Աբաքայը «Hurriyet Daily
News»-ի հետ զրույցում:

«82 տարվա գաղտնիք»՝ այս
խորագիրն է կրում Աբաքայի
և իր մոր հետ զրույցը

«Իմ մայրը ինձ ստիպեց խոստա-
նալ, որ ես նրա պատմությունը չեմ
պատմի ոչ իմ կնոջը, ոչ աղջկաս
կամ էլ նրա քույրիկներին, քանի դեռ
նա ողջ է: Ես այս մասին խոսեցի այն

ժամանակ, երբ նա մահացավ, պար-
զելու թե արդյո՞ք այլ գաղտնիքներ էլ
կան, որ պետք է բացահայտել: Իմ
քույրը ինձ խնդրեց չբացահայտել
այդ մասին, քանի որ ես լրագրող եմ
և կարող է տեղի ունենալ այն, ինչ
տեղի ունեցավ Հրանտ Դինքի հետ:
Իմ բարեկամներից շատերը չեն կա-
րողանում իրենց ինքնությունն ըն-
դունել», - նշել է Աբաքայը, պարբե-
րականի հետ զրույցում:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Սերգեյ Վարդանյան: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-քարեգործական հասարակական կազմակերպություն:
Դասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Դեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին:
Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Չայն համընթացին» պարտադիր է: Գրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван),
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЫАН. Издается с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan).
«DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org